

## Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց Հայաստան



# ՏԵՂԵԿԱԹԵՐԹ #3

Մարտ 2017

Երևան, Հայաստան



# Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ.....	3
Սննդի վերամշակում .....	3
Տեքստիլ արտադրություն .....	5
Շինարարություն .....	8
R&D .....	10
Տեղեկատվական տեխնոլոգիաներ.....	12
Կոսմետիկա.....	13
Դեղագործություն .....	14
Այլ ոլորտներ .....	16
Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ.	19
Եվրոպական նորություններ և միջոցառումներ.....	21

# Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

Հայաստանյան ՓՄՁ-երի միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՑ Հայաստանը ուշադրության է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.

## Մենդի վերամշակում



## Գործարար համագործակցության առաջարկներ

### *Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ*

Իսրայելյան ընկերությունը, որը հիմնադրվել է 1887 թ. -ին և մասնագիտացած է առողջարար՝ օրգանական, առանց գլյուտեն, առանց լակտոզա սննդի և սննդային հումքի մշակման, արտադրության և վաճառքի ոլորտում, փնտրում է սննդի ոլորտում գործող օտարերկրյա մատակարարներ՝ առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով: Ավելին, մանրածախ վաճառողներին ընկերությունն առաջարկում է համագործակցություն՝ մասնավոր

պիտակով արտադրանք արտադրական համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOIL20160221001

***Մրգային պտղամիս արտադրողը փնտրում է ֆրանչայզ/դիստրիբյուտորներ***

Մրգային պտղամիս արտադրող հայտնի ընկերությունը, որը գտնվում է Բրազիլիայի հյուսիսային հատվածում, արտադրում է ասաի (մուգ մանուշակագույն հատապտուղ) պտղամիս՝ հարստացված գուարանայի փոշով, մեղրով և կուպուակույի պտղամսով: Ընկերությունը փնտրում է գործընկերներ, ովքեր հետաքրքրված են ֆրանչայզով և/կամ տարածման համաձայնագրերով:

Ծածկագիր. BOBR20151221001

***Արտադրողն առաջարկում է իր ծառայությունները***

100 % սեփականությամբ ֆիննական ընկերությունը մասնագիտացած է սննդամթերքի պայմանագրային արտադրության ոլորտում: Արտադրական պորտֆելը բաղկացած է սննդամթերքից, որոնք ընկերությունն արտադրում է արտադրական պայմանագրային համաձայնագրի ներքո: Օգտագործվող արտադրական մեթոդներից են՝ վակուումայինը, ավտոկլավը, վառարանում թխելը, եռացնելով պատրաստելը: Ընկերությունն այժմ ցանկանում է ընդլայնել իր շուկաներն արտերկրում և առաջարկում է իր արտադրական ծառայություններն արտադրական և/կամ ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOFI20161108002

***Բարձրորակ օրգանական սննդամթերք արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ***

Լեհական ընկերությունն առաջարկում է առողջարար և օրգանական սննդամթերք (էքստրա ջեմեր, մրգային օշարակներ, հյութեր, մեղր, թթու վարունգ, համեմունքներ), որոնից մի մասը ստացել է Եվրոպական խոհանոցային ժառանգության մրցանակ: Ընկերությունը ցանկանում է երկարատև բիզնես համագործակցություն հաստատել տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOPL20160819003

**Գործարար համագործակցության հարցումներ**

***Որոնվում է բարձրորակ թեյի բաղադրիչների մատակարար***

Սլովենական ընկերությունը, որը մասնագիտացած է թեյի և սուրճի մշակման ոլորտում, փնտրում է բարձրորակ, տարբեր տեսակների թեյի բաղադրիչների մատակարարներ՝ թեյի խառնուրդներ արտադրելու համար: Ընկերությունը փնտրում է արտադրական համաձայնագրեր:

Ծածկագիր. BRSI20170113001

***Հանքային ջրի դիստրիբյուտորը փնտրում է մատակարարներ***

Ռուսական ընկերությունը, որը տարածում է հանքային ջրեր, փնտրում է հանքային ջրի մատակարարներ շահավետ համագործակցության նպատակով՝ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. **BRRU20170124002**

***Ընկերությունը փնտրում է օրգանական ընկուզեղեն և սերմեր արտադրողներ/մատակարարներ***

Դանիական ներմուծող և մանրածախ առևտրով զբաղվող ընկերությունը, որը մասնագիտացած է օրգանական սննդամթերքի ոլորտում, փնտրում է օրգանական ընկուզեղենի և սերմերի մատակարարներ՝ դանիական շուկայում որպես դիստրիբյուտոր հանդես գալու նպատակով: Հատկապես, ընկերությունը փնտրում է՝ նուշ (Marcona), ընկույզ, հնդկական ընկույզ, պնդուկ, սոճու ընկույզ, պիստակ, քուինոայի և չիպի սերմեր:

Ծածկագիր. **BRDK20160901001**

***Ընկերությունը փնտրում է տարածման համաձայնագրերի նորքո համագործակցություն***

Կանադական ընկերությունը, որը փորձ ունի վաճառքի, մարքեթինգի և ապրանքանիշի գովազդման ոլորտում, փնտրում է եվրոպական ընկերություններ, որոնք ցանկանում են մուտք գործել կանադական շուկա: Ընկերությունը մասնագիտացած է փաթեթավորված սպառողական ապրանքների և մանրածախ սննդամթերքի ոլորտում: Ընկերությունը հետաքրքրված է տարածման ծառայությունների համաձայնագրերով:

Ծածկագիր. **BRCA20160610001**

## Տեքստիլ արտադրություն



## Գործարար համագործակցության առաջարկներ

### *Ընկերությունը փնտրում է գործակալներ և/կամ դիստրիբյուտորներ*

Իտալական ընկերությունը, որը մասնագիտացած է կանանց համար նախատեսված պայուսակների և արքեսուարների լայն տեսականու արտադրության ոլորտում, որոնք արվում են վերամշակված նյութերից, փնտրում է գործակալներ և/կամ դիստրիբյուտորներ առևտրային համաձայնագրերի համար:

Ծածկագիր. BOIT20150119003

### *Հագուստ արտադրող լեհական ընկերությունը փնտրում է եթնապայմանագրային ծառայություններ*

Լեհական ընկերությունը, որը մասնագիտացած է ճամփորդական վերնազգեստի և ջրակայուն հագուստի արտադրության ոլորտում (նորաձևության համար, նաև որպես համազգեստ), առաջարկում է իր ենթապայմանագրային ծառայությունները:

Ծածկագիր. BOPL20150617001

### *Արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ, անհատ վաճառքի գործակալներ, ինչպես նաև առաջարկում է արտադրական ծառայություններ*

Իսպանական ընկերությունը, որն արտադրում է բարձր ու միջին որակի կաշվե բաճկոններ, փնտրում է դիստրիբյուտորներ, գործակալներ կամ անհատ վաճառքի գործակալներ որոշ եվրոպական երկրներում առևտրային կամ տարածման ծառայությունների ներքո համագործակցելու նպատակով: Բրենդն այժմ ներկայացված է Իսպանիայում, Ֆրանսիայում, Պորտուգալիայում, Իռլանդիայում, Շվեյցարիայում և Հունաստանում: Ընկերությունը ցանկանում է ոչ միային մեծացնել իր շուկան այդ երկրներում, այլ նաև փնտրում է եվրոպական նոր շուկաներ: Ընկերությունը նաև պատրաստ է աշխատել արտադրական համաձայնագրերի ներքո այլ բրենդների հետ:

Ծածկագիր. BOES20170125001

### *Նորարարական շինարարական և սպորտային ձեռնոցներ*

Ընկերությունն արտադրում է նորարարական շինարարական և սպորտային ձեռնոցներ, որոնք նախատեսված են կրկնվող վնասվածքներ ստացող մարդկանց համար, թենիսի ժամանակ արմունկի վնասման դեպքում, ձեռքերի թուլության կամ նման այլ դեպքերում (արթրիտ, Պարկինսոնի հիվանդություն), որոնք առաջանում են սպորտի, «պատրաստիք ինքդ» կամ ամենօրյա այլ գործողությունների հետևանքով: Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ վաճառելու համար այդ ապրանքները մանրածախ առևտրականներին, ինտերնետային վաճառքով զբաղվողներին, մարքեթինգային գործակալներին: Դրանք կարող են լինել կորպորատիվ նվերներ՝ սպորտային ֆեդերացիաների, հյուրընկալող և բիզնես կենտրոնների

համար: Ընկերությունը ցանկանում է ստորագրել տարածման համաձայնագրեր:

Ծածկագիր. BOUK20160106002

***Նորարարական ջերմակայուն-ակտիվ և հակաբակտերիալ գույլայաներ արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ***

Լեհական ընկերությունը, որն արտադրում է նորարարական ջերմակայուն-ակտիվ և հակաբակտերիալ գույլայաներ սպորտային տարբեր գործողությունների համար՝ արված բնական և սինթետիկ նյութերից, փնտրում է դիստրիբյուտորներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BOPL20161108001

***Պաշտպանիչ աշխատանքային հագուստ արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ և առաջարկում է արտադրական ծառայություններ***

Խորվաթական ընկերությունը, որն արտադրում է պաշտպանիչ աշխատանքային հագուստ և ձեռնոցներ, փնտրում է գործընկերներ, ովքեր հետաքրքրված են տարածման ծառայություններով և առաջարկում է պատվերով աշխատանքային հագուստի արտադրություն: Աշխատանքային հագուստը արված է այնպիսի տարբեր նյութերից, որոնք առավել հարամարեցված են տվյալ աշխատանքին:

Ծածկագիր. BOHR20150901001

## **Գործարար համագործակցության հարցումներ**

***Ընկերությունը փնտրում է տան դեկորացիաներ՝ մորթուց/կաշվից արտադրանքների տարածման համար***

Չեխական դիստրիբյուտորը, որը մասնագիտացած է տան համար նախատեսված մորթուց արված դեկորացիաների ոլորտում, փնտրում է կաշվից կամ մորթուց արված դեկորացիաներ (բարձեր, վերմակներ, գորգեր, երեսվածքներ և մորթիներ) և այլ տեքստիլ արտադրանք՝ արված քաշմիրից, բրդից կամ ալպակայի բրդից: Ընկերությունն առաջարկում է մեծածախ առևտրի միջնորդավորված ծառայություններ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո: Այն նաև առաջարկում է ներկայացնել տվյալ ընկերությունը Չեխիայի Հանրապետությունում և Եվրոպայում՝ առևտրային համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BRCZ20170130001

**Նորարարական գերմանական դիզայներական ընկերությունը փնտրում է արտադրողներ տեքստիլի ոլորտում**

Գերմանական դիզայները (որը գտնվում է հարավային Գերմանիայում՝ Բավարիայում), որը զբաղվում է նորարարական և նոր պատրաստված ապրանքատեսակներով՝ արված պահանջարկին համապատասխան դիզայնով, մշակել է փաստաթղթերի թղթապանակի պաշտպանիչ ուսադիր, որը համապատասխանեցվում է տարբեր լայնության թղթապանակներին: Ընկերությունը փնտրում է արտադրական համաձայնագրեր օտարերկրյա ընկերությունների հետ:

Ծածկագիր. **BRDE20160317001**

**Շինարարություն**



**Գործարար համագործակցության առաջարկներ**

**Ընկերությունը, որը մասնագիտացած է շինարարական աշխատանքներում, փնտրում է համատեղ ձեռնարկություն հիմնելու հնարավորություն**

Հունգարական ընկերությունը զբաղվում է շինարարական աշխատանքներով՝ վերանորոգում, կապիտալ վերանորոգման աշխատանքներ, տեխնիկական հսկողություն: Ընկերությունը փնտրում է ինժեներական և ծրագրային պլանավորման գրասենյակների հետ եվրոպական շուկայում շինարարական աշխատանքների համար համատեղ ձեռնարկություն հիմնելու հնարավորություն:

Ծածկագիր. **BOHU20150914001**

**Ընկերությունն առաջարկում է վաճառք/ընկերության ձեռքբերում կամ համատեղ ձեռնարկություն հիմնելու հնարավորություն**

Ռումինական ընկերությունը մասնագիտացած է ճանապարհների և կամուրջների տեխնիկական շինարարության, հիդրո շինարարության և բարեկարգման ոլորտում:



Ընկերությունը գտնվում է Ռումինիայի հյուսիս-արևելքում: Ռումինական բիզնես միջավայրը բարենպաստ է, և առաջիկա 5 տարիների ընթացքում բազմաթիվ շինարարական աշխատանքներ կան իրականացնելու համար: Ընկերությունը փնտրում է ներդրող կամ գործընկեր՝ ընկերության միավորման, ձեռքբերման կամ համատեղ ձեռնարկության նպատակով:

Ծածկագիր. **BORO20160321002**

***Հաստոցներ արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ իրենց ապրանքների համար***

Լեհական արտադրողը, որը գործում է հաստոցների և ավտոմեքենաների մասերի արտադրության ոլորտում, ցանկանում է հաստատել համագործակցություն նման ապրանքների դիստրիբյուտորների հետ: Ընկերությունը բաց է նաև փոխհամալրող արտադրանքի և ենթապայմանագրային համագործակցության համար: Առաջարկը ԵՄ անդամ և ոչ անդամ երկրների համար է:

Ծածկագիր. **BOPL20150826001**

***Կլաստերը կայուն շինարարության համար առաջարկում է 3D և բազմակողմանի շենքերի տեղեկատվական մոդելավորում***

Ֆրանսիական Կլաստերը, որը գտնվում է Բորդոյի մոտակայքում, զբաղվում է էկոլոգիապես մաքուր շինարարությամբ՝ կիրառելով սոճու փայտ և ամուր նյութեր: Ընկերությունն առաջարկում է 3D և (ընկղմող) շենքերի տեղեկատվական մոդելավորում (BIM): Ֆրանսիական ընկերությունը կտրամադրի ամբողջական աջակցություն ցանկացած հետաքրքրվող գործընկերոջը՝ ծառայությունների համաձայնագրի ներքո:

Ծածկագիր. **BOFR20151021006**

***Մետաղական կառուցվածքներ արտադրողն առաջարկում է ենթապայմանագրային համագործակցություն***

Բուլղարական ընկերությունը, որն արտադրում և հավաքում է մետաղական կոնստրուկցիաներ, մասնագիտացած է գործարանների, ցուցասրահների, խանութների և պահեստների համար նախատեսված կառուցվածքների արտադրության մեջ, փնտրում է գործընկերներ, ովքեր հետաքրքրված են ծառայությունների համաձայնագրերով և իրենց մետաղական կառուցվածքների կամ մասերի պլանավորման, արտադրության և/կամ հավաքման ենթապայմանագրային համագործակցությամբ:

Ծածկագիր. **BOBG20151203001**

***Էկո քոթեջների բնակավայրը փնտրում է գործընկերներ***

Ուկրաինական էկո քոթեջների բնակավայրը, որը նախագծված է ամերիկյան շինարարական ընկերության կողմից, փնտրում է ընկերություններ, որոնք հետաքրքրված են ֆինանսական համաձայնագրերի ներքո ներդրմամբ կամ ցանկանում են հանդես գալ

իրբն բիզնես գործակալ՝ աջակցելու համար այդ քոթեջների վաճառքին:

Ծածկագիր. BOUA20160809001

## Գործարար համագործակցության հարցումներ

### *Ընկերությունը փնտրում է գործընկերներ աութսորսի նպատակով*

Գերմանական ընկերությունը, որը գործում է մետաղների մշակման ոլորտում, արտադրում է հատուկ սարքավորումներ և ամրանային կառուցվածքներ: Ընկերությունն իր արտադրական որոշ գործողությունների համար փնտրում է աութսորս և փնտրում է այդ ոլորտում հատուկ գիտելիքներ ունեցող գործընկերներ: Ընկերությունը փնտրում է արտադրական համաձայնագրեր:

Ծածկագիր. BRDE20161128001

### *Ընկերությունն առաջարկում է առևտրի միջնորդավորված ծառայություններ*

Ընկերությունը Բուլղարիայի հյուսիս-արևմուտքից, գործում է էլեկտրական նյութերի և լուսատուների ներմուծման, տարածման և առևտրի ոլորտում: Այս ՓՄՁ-ն ունի սեփական սրանսպորտային միջոցները և առաջարկում է իր առևտրի միջնորդավորված ծառայությունները ընկերություններին Եվրոպայում և դրանից դուրս:

Ծածկագիր. BRBG20161219001

## R&D



*H2020-ICT-16-2017. Որոնվում է ՓՄՁ կամ մեծ արդյունաբերական ձեռնարկություն, որը կտրամադրի մեծ ծավալներով տվյալներ՝ փորձնական օգտագործման համար*

Իսպանական ՓՄՁ-ն համակարգում է առաջարկ H2020-ICT-16-2017 մրցույթի համար: Ծրագրի նպատակն է մշակել ենթակառուցվածք ձեռք բերելու համար տվյալներ սենսորներից և տարբեր աղբյուրներից, արդեն բաշխված ամպային և ծրագրային լուծումներով տվյալները մշակելու և վերլուծելու համար, ինչպես նաև նոր մեծ տվյալներ մշակելու համար: Մշակված ենթակառուցվածքը կառաջարկվի որպես հիմք վերջնական սպառողի համար: Կոնսորցիումը փնտրում է ՓՄՁ կամ արդյունաբերական գործընկեր, որը մշակում է մեծ տվյալներով ծրագրեր՝ օգտագործման պիլոտային տարբերակ տրամադրելու նպատակով:

Ծածկագիր. RDES20170303001

***Shift2Rail calls: Որոնվում են վերջնական սպառողներ և Plug&Play հմտություններ (երկաթուղային փոխադրումներ) բաղադրանյութերի և նորարարական նյութերի վերաբերյալ՝ նախատեսված շարժակազմի համար համատեղ նախագիծ ստեղծելու համար***

Ֆրանսիական ինժեներական գրասենյակը, որը լավ փորձ ունի նախագծերում (Գերմանիայում հիմնված ընկերություն և լաբորատորիա Միացյալ Թագավորությունից) փնտրում է համագործակցություն՝ Shift2rail call topic (S2R-CFM-IP1-01-2017 or S2R-OC-IP1-01-2017) թեմայի մրցույթի առաջարկը ներկայացնելու համար, ինչպես նաև հաջորդ սենյի շարժակազմի համար նոր գաղափարներ նորարարական նյութերով և բաղադրանյութերով մշակելու նպատակով: Ընկերությունը փնտրում է վերջնական սպառողներ և Plug&Play հմտություններ՝ երկաթուղային տրանսպորտի ոլորտից հետազոտական համաձայնագրերի համար:

Ծածկագիր. RDFR20161220001

***Որոնվում են արդյունաբերական գործընկերներ էլեկտրական սնուցման համակարգերի ոլորտում Innoenergy մրցույթի համար***

Նորարարության ոլորտում գործող ընկերությունը, որը գտնվում է Միլանի տարածաշրջանում, որը հանդիսանում է շարժական և ստացիոնար էլեկտրաէներգիայի արտադրություն և պահեստավորման ոլորտում առաջադեմ, թեթև տեխնոլոգիաների արտադրող, պատրաստվում է մասնակցել Innoenergy մրցույթին: Ծրագրի նպատակն է բարելավել և շուկա բերել հիբրիդային վառելիքի բջջային համակարգը, որը մշակված է երկարաձգելու առաջնային վերականգնվող էներգիայի աղբյուրների ժամկետները: Ընկերությունը փնտրում է արդյունաբերական գործընկերներ, ովքեր գործում են էլեկտրական սնուցման համակարգերի ոլորտում՝ նոր հիբրիդային վառելիքի բջիջը առևտրականացնելու նպատակով:

## Տեղեկատվական տեխնոլոգիաներ



### Գործարար համագործակցության առաջարկներ

***SS ընկերությունն առաջարկում է ամբողջական Աշխարհագրական տեղեկատվական համակարգ (GIS) և SS ծառայություններ՝ պետական միավորների և առևտրային ընկերությունների համար***

Լեհական SS ընկերությունը, որը հիմնադրվել է 2014 թ. -ին, առաջարկում է մի շարք SS ծառայություններ B2B (բիզնես-բիզնես) և B2G (բիզնես-կառավարություն) ոլորտում: Այն փնտրում է պոտենցիալ համագործակցություն տուրիստական, ավիացիոն և քաղաքների խթանման ոլորտներում: Ընկերության պորտֆելը ներառում է Աշխարհագրական տեղեկատվական համակարգի (GIS) ծառայությունների կիրառում և բջջային ծրագրերի ստեղծում: Ընկերությունը փնտրում է համագործակցություն ծառայությունների համաձայնագրի ներքո:

Ծածկագիր. BOPL20161018002

***Խորհրդատվական ընկերությունը, որը գործում է մշակույթի, հանգստի և տուրիզմի ոլորտներում, առաջարկում է իր ծառայությունները***

Ֆրանսիական ՓՄՁ-ն մասնագիտացած է թանգարանների, արվեստի պատկերասրահների և զվարճանքի այգիների համար նորարարական թվային տեխնոլոգիաների նախագծմամբ և ստեղծմամբ: Ընկերությունը տրամադրում է ամբողջական տեխնոլոգիական լուծումները՝ սկսած գաղափարից մինչև տեղադրում: ՓՄՁ-ն առաջարկում է ծառայությունների համաձայնագրեր ցանկացած տուրիստական, հանգստի կամ մշակութային վայրերին, որոնց

ցանկանում են մոդեռնիզացվել թվային գործիքների օգնությամբ:

Ծածկագիր. BOFR20160218002

### *ՓՄՁ-ն փնտրում է գործընկերներ աութսորսինգային համաձայնագրերի ներքո*

Հունգարական SS ընկերությունն առաջարկում է SS հարակից ծառայություններ՝ սկսած հասարակ վեբ-կայքից, բջջային հավելվածներից, ավարտած առավել բարդ և բազմակողմանի ծրագրային լուծումներով: Ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ աութսորսինգային համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOHU20160303001

## Գործարար համագործակցության հարցումներ

### *Լեհական ՓՄՁ-ն փնտրում է GPS/GSM տեղորոշիչների մատակարարներ*

Փոքր ընկերությունը Լեհաստանի հյուսիս-արևելքից, որը ստեղծում է SS համակարգեր, փնտրում է GPS/GSM տեղորոշիչների մատակարարներ: Ընկերությունը հիմնականում հետաքրքրված է երեխաների և հեծանիվների տեղորոշիչներով: Դրանք պետք է կիրառվեն ընկերության կողմից առաջարկվող SS լուծումներում: ՓՄՁ-ն փնտրում է համագործակցություն արտադրական համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BRPL20160314001

## Կոսմետիկա



## Գործարար համագործակցության առաջարկներ

### *Արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ*

Փոքր ընկերությունը Լեհաստանի Լոուեր Սիլեզիա տարածաշրջանից, արտադրում և վաճառում է կոսմետիկա և դիետիկ հավելումներ՝ հիմնված բնական, ձկներից ստացված

կոլագենի վրա: Ընկերությունը փնտրում է առևտրի միջնորդավորված ծառայություններ՝ միջնորդներ/դիստրիբյուտորներ, ովքեր կվաճառեն իրենց ապրանքները: Ընկերությունը փնտրում է տարածման և առևտրային տարածման համաձայնագրեր:

Ծածկագիր. BOPL20161227004

***Մարմնի խնամքի բնական միջոցներ և արոմատիզատորներ արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ և/կամ գործակալներ***

Ընկերությունը Ֆրանսիայի հարավից, որը ստեղծվել է 2004 թ-ին, արտադրում է կենցաղային արոմատիզատորներ (ռաթանե դիֆուզորներ, մոմեր, սփրեյներ) և օրգանական մարմնի խնամքի միջոցներ լավանդայից: Ընկերությունը ցանկանում է հիմնել երկարատև համագործակցություն դիստրիբյուտորների և/կամ գործակալների հետ՝ ընդլայնելու համար տարածման ցանցը Եվրոպայում և ողջ աշխարհում: Ընկերությունը ձգտում է հասնել բարձրորակ արտադրանքի՝ կիրառելով այնքան բնական և տեղական բաղադրիչներ, որքան հնարավոր է:

Ծածկագիր. BOFR20170109001

***Ընկերությունը փնտրում է առևտրի միջնորդավորված ծառայություններ***

Պորտուգալական ընկերությունը Մադեիրա կղզուց, որը մասնագիտացած է ալտե վերայից կոսմետիկ ապրանքների արտադրության ոլորտում, փնտրում է առևտրի միջնորդավորված ծառայություններ՝ հատկապես առևտրային գործակալության և տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո: Ալտե վերան հայտնի է իր ճանաչված և փորձարկված թերապևտիկ հատկություններով և այժմ շատ տարածված է:

Ծածկագիր. BOPT20150817001

## Դեղագործություն



### Գործարար համագործակցության առաջարկներ

---

***Որոնվում են դիստրիբյուտորներ, գործակալներ, ներկայացուցիչներ***

Իսրայելյան ՓՄՁ-ն, որը մասնագիտացած է բարձրորակ, ընդհանուր ապրանքների արտադրության ոլորտում, առաջարկում է բազմազան դիվերսիֆիկացված դեղագործական ապրանքներ: Ապրանքները կարող են կիրառվել կանոնավոր բուժման համար: Այս ապրանքների առավելություններից են՝ հաճախորդի կարիքներին հարմարվելը, վերջնական արտադրանքի բարձր որակը: Հնարավոր համագործակցության տիպերն են՝ առևտրային գործակալության համաձայնագրերը և տարածման ծառայությունների համաձայնագրերը:

**Ծածկագիր. BOIL20140828001**

**Արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ և գործակալներ**

Հունգարական ընկերությունը, որն արտադրում և վաճառում է մարդկանց և կենդանիների բուժման համար նախատեսված բժշկական-վիրաբուժական և ատամնաբուժական ձեռքի գործիքներ, փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ ողջ աշխարհում: Ընկերությունը նաև փնտրում է ODM՝ օրիգինալ դիզայնով արտադրողներ, արտադրական համաձայնագրերի շրջանակներում համատեղ արտադրանք արտադրելու համար:

**Ծածկագիր. BOHU20151124001**

***Ընկերությունը փնտրում է գործընկերներ***

Ֆրանսիական ընկերությունը Փարիզից, որը գործում է էսթետիկական ոլորտում, մշակել է սարք, որը բուժում է թերություններով մաշկը (բծեր, սպիներ, կնճիռներ, բշտիկեր... ): Սարքավորումը պլաստիկ վիրաբուժության մեջ օգտագործվել է շուրջ 10 տարի և այժմ կիրառվում է էսթետիկայի ոլորտում: Ֆրանսիական ընկերությունը փնտրում է եվրոպական դիստրիբյուտորներ՝ արտերկրում իր գործունեությունը զարգացնելու նպատակով:

**Ծածկագիր. BOFR20160608001**

---

**Գործարար համագործակցության հարցումներ**

---

***Ընկերությունը փնտրում է անոթային արյան հավաքման համար պարագաներ արտադրող***

Ռուսական ընկերությունը Ուլյանովսկի տարածաշրջանից, որը մասնագիտացած է

---

անոթային արյան հավաքման համար նախատեսված բժշկական սարքավորումների արտադրության ոլորտում, փնտրում է գործընկերներ՝ հակամակարդիչ նյութով արյան թեսթավորման խողովականման տարաներ գնելու նպատակով: Ընկերությունը ցանկանում է հաստատել արտադրական համաձայնագրեր:

Ծածկագիր. BRRU20160811003

## Այլ ոլորտներ



## Գործարար համագործակցության առաջարկներ

### ***Գովազդային վահանակներ արտադրողը փնտրում է առևտրային գործակալություններ***

Թուրքական ընկերությունը, որը մասնագիտացած է գրենական պիտույքների, սննդի և տեքստիլի գովազդային վահանակների դիզայնի և արտադրության ոլորտում, փնտրում է առևտրային գործակալություններ Եվրոպայում:

Ծածկագիր. BOTR20161230003

### ***Տուրքհորատ արտադրողը փնտրում է առևտրային գործակալներ արտերկրում***

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է տուրքհորատ սարքավորումների արտադրության ոլորտում, ինչպես օրինակ՝ հորատանցքերի հորատման շարժիչներ և նավթի, գազի հորատանցքերի տուրքհորատների արտադրության ոլորտում, փնտրում է գործընկերներ առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BORU20161102002

***Ընկերությունն առաջարկում է բարձրորակ LED լուսավորման տեխնոլոգիայի արտադրություն, ներմուծում և վաճառք***



Մլրվակյան ընկերությունն առաջարկում է մի շարք LED լուսավորման ապրանքներ: Այն ունի փողոցային LED լամպերի և արդյունաբերական LED լուսավորման արտադրական ծրագիր: Ընկերությունը կարող է նաև վերամոդելավորել հին լամպերը և լուսավորման պարագաները մոդեռն LED տեխնոլոգիայի միջոցով՝ առանց փոխելու դրանց տեսքը: Այս ընկերությունն արտադրում է կիրառելի բարձրագույն ու բարձրորակ բաղադրիչներ: Ընկերությունը փնտրում է գործընկերներ առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով:

**Ծածկագիր. BOSK20160114001**

### ***Նորաձև զարդեր արտադրող իտալական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ***

Իտալական ընկերությունը, որն արտադրում է նորաձև զարդեր, փնտրում է դիստրիբյուտորներ: Ընկերությունն ունի ավելի քան 15 տարվա փորձ այդ ոլորտում և ստեղծել ու գործարկել է չժանգոտվող պողպատից առանց նիկելի թանկարժեք քարերի հոսքագիծ: Դիզայնը պարզ է, գրավիչը հաղորդագրությունն է, որ ամեն զարդի մեղալի վրա փորագրված է: Ընկերությունը փնտրում է տարածման ծառայություններ:

**Ծածկագիր. BOIT20160324002**

## **Գործարար համագործակցության հարցումներ**

### ***Ընկերությունը փնտրում է պլաստիկ շիշ և ապակյա անոթ արտադրողներ***

Սահմանափակ ընկերությունը Միացյալ Թագավորությունից փնտրում է հարմար արտադրական գործընկերներ արտադրական համաձայնագրի ներքո իրենց տեխնոլոգիական հայեցակարգի և մտավոր սեփականության վրա հիմնված պատվերով պլաստիկ շշերի և անոթների արտադրության համար:

**Ծածկագիր. BRUK20170213002**

### ***Առևտրային ընկերությունը փնտրում է արտադրողներ՝ նրանց արտադրանքը տարածելու նպատակով***

Լեհական ՓՄՁ-ն, որը մասնագիտացած է արդյունաբերական ապրանքների առևտրով և տարածմամբ, փնտրում է արտադրողներ Եվրոպայից և Ասիայից՝ դրանք լեհական շուկայում տարածելու նպատակով: Ընկերությունը հետաքրքրված է երկարատև համագործակցության հաստատմամբ տարածման ծառայությունների ներքո:

**Ծածկագիր. BRPL20160713002**

### ***Մանկական կահույք արտադրողը փնտրում է կցամասեր արտադրող***

Մանկական կահույք արտադրողը փնտրում է կցամասեր արտադրող Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է բարձր տեխնոլոգիաներով արված և երեխաների համար նախատեսված կահույքի փայտաթելքային լամինացիայով, փնտրում է կահույքի կցամասեր և արքեսուարներ արտադրողներ՝ արտադրական համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:


Ծածկագիր. **BRRU20170124003**

***Տուրիստական ընկերությունն առաջարկում է իր ծառայություններն իբրև գործակալ կամ ներկայացուցիչ***

Ընկերությունը միացյալ Թագավորությունից, որը գտնվում է Լոնդոնում, հաջողակ ճանապարհորդական և տուրիստական գործակալ է, ով փնտրում է նոր միջազգային գործընկերներ՝ իրենց գործընկերների պորտֆելը ավելացնելու նպատակով: Ընկերությունը ցանկանում է հաստատել առևտրային գործակալության համաձայնագրեր այն ընկերությունների հետ, որոնք գործում են տուրիզմի և մշակութային արժեքների ոլորտում:

Ծածկագիր. **BRUK20160720001**

# Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



Business Support on Your Doorstep

## Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

### *Տեխնոլոգիա, որն ուլտրամանուշակագույն մանրէասպան ճառագայթների կիրառմամբ կախտահանի սնունդը*

Իսպանական համալսարանի հետազոտական խումբը մշակել է տեխնոլոգիա, որը ուլտրամանուշակագույն մանրէասպան ճառագայթների կիրառմամբ ախտահանում է սնունդը: Տեխնոլոգիան հնարավորություն է տալիս վերացնել ախտածին մարմինները սննդից՝ առանց դրա որակը վնասելու: Հետազոտական խումբը փնտրում է ընկերություններ, ովքեր հետաքրքրված են արդյունաբերական կիրառմամբ լիցենզիոն, հետազոտական և/կամ տեխնիկական համագործակցության համաձայնագրերի ներքո:

Ref : TOES20150119001

### *Ցուցադրման վահանակների քիմիական վերամշակում*

Կորեական ՓՄՁ-ն, որը մասնագիտացած է էլեկտրոնային քիմիական նյութերի ոլորտում՝ նախատեսված էկրաններ, սենսորային վահանակներ, արևային բջիջներ և կիսահաղորդիչներ, առաջարկում է էկրանների քիմիական նորարարական վերամշակում: Այն առաջարկում է գունային ֆիլտրերի, TFT (Բարակ ժապավենների տրանզիստոր), պոլիմիդ վերամշակման քիմիկատներ: Ընկերությունը փնտրում է գործընկերներ տեխնիկական աջակցությամբ լիցենզիոն, առևտրային համաձայնագրերի համար կամ համատեղ ձեռնարկություն, ֆինանսական ռեսուրսներ:

Ref : TOKR20150921001

---

---

## Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

---

### *Նորարարական տեխնոլոգիա առաջադեմ, զգայուն, ոչ թանկ և արագ էնդոտոքսինի թեստավորման համակարգի համար*

Գերմանական մեծ ընկերությունը, որը զբաղվում է բնական գիտություններով և տեղակայված է աշխարհի մի քանի տարածաշրջաններում, մատակարարում է էնդոտոքսին հայտնաբերող ապրանքներ: Ընկերությունն այժմ փնտրում է նորարարական տեխնոլոգիա առաջադեմ, զգայուն, ոչ թանկ և արագ էնդոտոքսինի թեստավորման համակարգի համար: Պահանջվող տեխնոլոգիան կամ պետք է լինի լաբորատոր փուլում, կամ մշակված, բայց չպետք է հիմնված լինի պայտաձև խեցգետինի կամ այլ կենդանական ծագման արտադրանքի վրա: Ընկերությունը փնտրում է ակադեմիական կամ առևտրային գործընկերներ վերլուծական հայտնաբերման ոլորտից կոմերցիոն կամ լիցենզիոն համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ref: TRKR20161129007

### *Կենսասակտիվ սննդային հավելումների բարելավում՝ կաթնաշաքարային անհանդուրժողությունը բուժելու համար*

Իտալական կենսատեխնոլոգիական ընկերությունը մշակել է սննդային հավելում՝ կաթնաշաքարային անհանդուրժողականությունը բուժելու համար : Այն պարունակում է լակտազային ֆերմենտ և բարձր քանակով լակտոբացիլի ացիդոֆիլ և պլանտարային լակտոբացիլի տինդալիզացված (ստերիլիզացված) միկրոօրգանիզմներ: Ընկերությունը հետաքրքրված է հետազոտական և տեխնիկական համաձայնագրերով մասնավոր կամ հանրային գիտական կենտրոնների, համալսարանների, դեղագործական ընկերությունների հետ, որոնք կարող են ներդրում ունենալ ապրանքի հետագա զարգացման համար:

Ref: TRIT20160213001

# Եվրոպական նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների Եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ Եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են 2017 թ. -ի ապրիլ, մայիս ամիսների ընթացքում կազմակերպվող միջոցառումները:

## Ապրիլ

04/04/2017	<p><b>H2020 Brokerage Event: Nanotechnologies and Advanced Materials (N&amp;M) Cambridge (United Kingdom)</b></p> <p>Սա մեկօրյա անվճար միջոցառում է, ուր կներկայացվեն մրցույթի առաջարկությունները, ներկա գաղափարները և Եվրոպական հանձնաժողովի ակնկալիքները: Այն առաջարկում է եզակի միջազգային ցանցային փորձ հետագա համագործակցության ամրապնդման համար:</p>
24/04/2014	<p><b>EEN Brokerage Event during Hannover Messe 2017 Hanover (Germany)</b></p> <p>Համագործակցության հաստատման միջոցառում Hannover Messe 2017-ի շրջանակներում</p> <p>Աշխարհի առաջատար տոնավաճառ Hannover Messe-ն տեղի կունենա 2017թ. -ի ապրիլի 24-28, որի շրջանակներում կկազմակերպվի համագործակցության հաստատման միջոցառում՝ ընդգրկող տոնավաճառի բոլոր ոլորտները՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• Արդյունաբերական ավտոմատացում. առաջատար տոնավաճառ գործարանային և մշակման ավտոմատացման, համակարգերի լուծումների և SS արդյունաբերության համար:</li> <li>• Թվային գործարան. առաջատար տոնավաճառ ինտեգրված գործընթացների SS ոլորտի համար: Էներգիա. առաջատար տոնավաճառ ինտեգրված համակարգերի և շարժականության համար: Արդյունաբերական ռեսուրսներ. առաջատար տոնավաճառ նորարարական</li> </ul>

	<p>ենթապայմանագրային լուծումների և թեթև շինարարության համար:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հետազոտություն և տեխնոլոգիաներ. առաջատար տոնավաճառ R&amp;D-ի և տեխնոլոգիական փոխանցման համար:</li> </ul>
--	--

**Մայիս**

09/05/2017	<p><b>EEN Brokerage Event at ICT Spring 2017 Luxembourg (Luxembourg)</b>          Համագործակցության հաստատման այս միջոցառումը Ձեր ընկերությանն առաջարկում է հետևյալը`</p> <ul style="list-style-type: none"> <li>• երկօրյա բիզնես հանդիպումներ</li> <li>• հնարավորություն ստեղծելու ամուր համագործակցություն S2S ոլորտում</li> <li>• ցանցային լայն հնարավորություններ թվային ոլորտի առաջատարների, նորարարության ոլորտի մենեջերների, հետազոտողների, սկսնակների և այլոց համար</li> <li>• հնարավորություն գտնելու ճիշտ բիզնես գործընկերներ մեկ վայրում:</li> </ul>
------------	---

Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁԵՅ Հայաստան:

**Նշում:** *Եթե Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել ՁԵՅ Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:*

*Հարգելի գործարար,*

Գրանցվեք հետևյալ հղմամբ՝

<http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Customer/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799> և ստացեք անվճար

հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես ստաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:

***Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են:***